

Ղրիմ անկախ երկիր լինելով միայն իրեն կ'իյնար իւր իշխանը կամ խանը ընտրելն. Ռուսաց քաղաքականութիւնն այս ընտրութեանս մէջ ևս ձեռք երկնցուց, և այնպիսի մէկուն ընտրութիւնը յաջողցուց, որ յետոյ իւր ձեռաց մէջ յարմար գործիք կամ խաղալիկ դարձաւ. այդ մէկն էր Շահան-Պերէյ, Թաթարաց վերջին խանը: Թաթար մոզաները (Նախարարք) հասկնալով բանին էութիւնը և հետեւանքները՝ շատ կը հակառակին. այլ պաշտպանին զէնքը կը ստիպէ զիրենք, սկսած գործը գլխաւորելու. այս գործիս համար Ռուսաց քաղաքականութիւնը բաց 'ի զինուց, մեծամեծ գումարներ ևս կը ծախէ, մոզաներն կաշառելու համար: Թուրքիոյ հետ Թաթարաց յարաբերութիւնք կը դադարին. Ղրիմու բարեբեր մասը դեռ ևս ազատ խանին Շահան-Պերէյի ձեռքն է. այլ նա իւր մեղկ կառավարութեամբ և թոյլ բնաւորութեամբ, անկարող կը լինի տիրաբար իշխելու, և զուրկ իւր նախորդաց Բադուններու և Իւզբէկնեբու արութենէն, ատելի կը լինի իւրոց և անարգ օտարաց առջև:

Այս միջոց ժամանակին՝ ռուս քաղաքականութիւնը անխոնջ կ'աշխատի, որ ազատ խանը ոչ միայն իւր պաշտպանութեան կարօտ, այլ և դրամական ևս նպաստ ընդունի, իբրեւ սպասաւոր արծաթոյ: Ռումեանցեւ զօրավարն վերոյգրեալ նպատակին հասանելու մի միայն յարմար միջոց կ'առաջարկէ ռուս պետութեան, Ղրիմու մէջ բնակող երկրագործ մշակ և արուեստաւոր Հայերը և Յոյները հանել անտի, որպէս զի երկիրն անմշակ մնալով՝ անանկանայ խանին գանձարանը, և ակամայ ստիպուի ռոճիկ ստանալ ի Ռուսաց: